ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

<<24>> մայիսի 2023 թ. քաղաք Մարալիկ

2023 թվականի մայիսի 24-ին ժամը 15^{00}–ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 7-Ա որոշման համաձայն, համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանվել յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթի օրը, սակայն Սառնաղբյուր համայնում ավանդաբար անցկացվող <<Սառնաղբյուրի պաշտպանության օրվան>> նվիրված մայիսի 26-ին անցկացվելիք միջոցառման կազմակերպական և անցկացման աշխատանքների հետ կապված, համայնքի ավագանու նիստը հրավիրվել է այսօր, որի վերաբերյալ համայնքի ավագանին համաձայնություն է տվել ավագանու նախորդ նիստին:

Նիստին մասնակցում էին՝

<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ԶԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ
10. ՆԱՐԻՆԵ ՍԱՐՈՅԱՆԸ,

11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
2. ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ,
3. ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԸ,
4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԸ,
5. ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ,
6. ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԸ,
7. ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
2. ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ Անի համայնքի ավագանու անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ, համայնքի ներկայացուցիչներ:

Նիստը վարող՝ Արման Սարիբեկյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Տեղեկացվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից համայնքի ավագանու նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամների սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են այսօրվա նիստի օրակարգի, օրակարգային հարցերի ավագանու որոշումների նախագծերը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 5-ի N 28 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի N 14-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության ղեկավարի հայտարարության մասին:

(Զեկուցող՝ խմբակցության ղեկավար՝ Է. ՈՒռուտյան)

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով հաստատվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի ժամը 15^{00}-ին Անիի համայնքապետարանի

վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 5-ի N 28 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի N 14-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության ղեկավարի հայտարարության մասին:

(Զեկուցող՝ խմբակցության ղեկավար՝ Է. Ոիռուտյան)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-2:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 5-ի N 28 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որ ավագանու որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթով: Որոշման նախագիծը մշակելիս հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող

տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով համայնքի բնակչությանը և կազմակերպություններին ծառայություններ մատուցելու պահանջարկով: Համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ժամանակահատվածից դուրս, ըստ անհրաժեշտության և պահանջարկի, համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցները, մեխանիզմներն ու սարքավորումները համայնքի բնակչությանը և կազմակերպություններին կարող են մատուցել տարբեր ծառայություններ, որի արդյունքում համայնքի բյուջեն կունենա լրացուցիչ եկամուտներ:

Համայնքի ավագանու անդամ Ռուզաննա Արշակյանը առաջարկություն ներկայացրեց նվազեցնել <<FORD>> 17+1 մակնիշի մարդատար միկրոավտոբուսի միջոցով ծառայությունների մատուցման դրույքաչափը, հիմնավորելով, որ ծառայության վճարը շուկայում գործող գներից բարձր է հաշվարկված: Իսկ ավագանու անդամ Արտակ Շաբոյանը առաջարկություն ներկայացրեց բարձրացնել GEHL BL 8185 MANITOU GROUP մակնիշի էսկավատոր-բեռիչի միջոցով ծառայության մատուցման դրոյքաչափը:

Համայնքի ղեկավարը պարզաբանեց, որ համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դրույքաչափերը սահմանելիս հաշվի են առնվել համապատասխան վառելանյութի ծախսերը և տեխնիկական միջոցների ամորտիզացիոն մաշվածության չափորոշիչները:

Ներկայացված առաջարկությունները համայնքի ավագանու կողմից չընդունվեցին:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N 28 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով համայնքի բնակչությանը և կազմակերպություններին ծառայություններ մատուցելու պահանջարկը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով համայնքի բնակչությանը և կազմակերպություններին

ծառայություններ մատուցելու դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող միկրոավտոբուս 17+1, ավտոբուս, ԳԱԶ-G41R13-1060, ՄԱԶ-555102-223 ինքնաթափ բեռնատարի և էքսկավատոր-բեռնիչի օգտագործման տրամադրելու համար վարձավճար և ժամավճար սահմանելու մասին>> N 28 որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2023 թվականի
մայիսի 24-ի N .-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

Հ/Հ	Համայնքի կողմից մատուցվող ծառայության տեսակը, անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
1.	**GEHL BL 8185 MANITOU GROUP մակնիշի էսկավատոր-բեռիչի միջոցով ծառայության մատուցման դիմաց /ներառյալ դիզելային վառելանյութի ծախսը/**	X
	1 /մեկ/ ժամ աշխատանքի դիմաց	12 500
	2 /երկու/ ժամ աշխատանքի դիմաց	25 000
	3 /երեք/ ժամ աշխատանքի դիմաց	37 500
	4 /չորս/ ժամ աշխատանքի դիմաց	50 000
	ութժամյա աշխատանքային օրվա դիմաց	90 000
2.	**ՄԱԶ 555102-223 մակնիշի ինքնաթափ բեռնատարով ուղիղ-հետադարձ բեռների փոխադրման ծառայության մատուցման դիմաց /ներառյալ դիզելային վառելանյութի ծախսը/**	X
	1 /մեկ/ մեքենա բեռ մինչև 30 /երեսուն/ կիլոմետր տեղափոխման դիմաց	12 500
	1 /մեկ/ մեքենա բեռ մինչև 50 /հիսուն/ կիլոմետր տեղափոխման դիմաց	25 000
	1 /մեկ/ մեքենա բեռ մինչև 100 /մեկ հարյուր/ կիլոմետր տեղափոխման դիմաց	50 000
3.	**ԳԱԶ-G41R13-1060 մակնիշի Ասինիզատորի միջոցով ծառայության մատուցման դիմաց /ներառյալ դիզելային վառելանյութի ծախսը/**	X
	Մինչև 5 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	8 000
	Մինչև 10 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության	12 000

	ծառայության դիմաց	
	Մինչև 30 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	17 000
	Մինչև 50 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	25 000
	Մինչև 100 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	50 000
	100 կմ և ավելի հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	100 000
	Յուրաքանչյուր հաջորդ մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	6 000
4.	**<<FORD>> 17+1 մակնիշի /միկրոավտոբուս/ մարդատար ավտոմեքենայով ուղիղ և հետադարձ կապով ուղևորների փոխադրման ծառայության դիմաց /ներառյալ դիզելային վառելանյութի ծախսը/**	X
	Մինչև 50 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	25 000
	Մինչև 100 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	30 000
	Մինչև 150 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	40 000
	Մինչև 200 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	50 000
	Մինչև 250 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	60 000
	Մինչև 500 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	130 000
5.	**<<ՊԱԶ>> մակնիշի մարդատար ավտոբուսով ուղիղ և հետադարձ կապով ուղևորների փոխադրման ծառայության դիմաց /ներառյալ դիզելային վառելանյութի ծախսը/**	X
	Մինչև 50 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	30 000
	Մինչև 100 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	40 000
	Մինչև 150 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	60 000
	Մինչև 200 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	70 000
	Մինչև 250 կիլոմետր հեռավորության վրա ուղևորափոխադրման ծառայության դիմաց	90 000

Հեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-3:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի N 14-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 12-րդ, 14-րդ կետերի դրույթներով համայնքի ՏԻՄ-երին վերապահված խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների կատարումն ապահովելու համար:

Համայնքի ավագանուն առաջարկվեց քննարկել նախագիծը, առաջարկություն կամ դիտողություն ունենալու դեպքում՝ ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 14-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 12-րդ, 14-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ղեկավարի կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

Հանձնաժողովի նախագահ

Էդգար Սաղաթելյան – Անի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ
Գևորգ Շաբոյան - Անի համայնքի ղեկավարի խորհրդական,
Աստղիկ Մկրտչյան - Անի համայնքի ղեկավարի օգնական,
Լուսինե Գրիգորյան – Միասնական սոցիալական ծառայության Մարալիկի տարածքային կենտրոնի ավագ սոցիալական աշխատող /համաձայնությամբ/,
Սաթենիկ Սահակյան – Անիի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ, հոգեբան,
Մանուշակ Մարտիրոսյան - Անիի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ,
Արմենուհի Այվազյան - <<Կարմիր խաչ>> հասարակական կազմակերպության անդամ /համաձայնությամբ/:

2. Հանձնաժողովի նախագահ Էդգար Սաղաթելյանին.

ա. խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմից նշանակել հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:

բ. Հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հուլիսի 2-ի N 631 որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ>> սահմանված կարգով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

<u>Օրակարգ-4:</u>

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 13-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որ համայնքի ավագանու նախորդ նիստին ընդունված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 13-Ա որոշման մեջ համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների պաշտոնային դրույքաչափերը սահմանելիս չեն ապահովվել <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձերի չափը /75 000 ՀՀ դրամ/: Օրենքի պահանջը ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել նշված որոշման հավելվածներում կատարելու համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 34-րդ հեդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 13-Ա որոշման <<N, N 1-9>> հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N, N 1-9 հավելվածների:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշման հավելվածները կցվում են արձանագրությանը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-5:

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության ղեկավարի հայտարարության մասին:

(Զեկուցող՝ խմբակցության ղեկավար՝ Է. Ոհռուտյան)

Զեկուցողը հայտարարեց, որ 2023 թվականի մայիսի 24-ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության հերթական նիստը:

Նիստում քննարկվել են հետևյալ հարցերը՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության կանոնադրությունը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության փորձագետի և գործավարի աշխատանքային պարտականությունների ցանկը հաստատելու մասին:

Խմբակցության կողմից ընդունված որոշումների համաձայն, հաստատվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության կանոնադրությունը և խմբակցության փորձագետի ու գործավարի աշխատանքային պարտականությունները:

<<Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, խմբակցությունը իր որոշմամբ ընդունված կանոնադրությունը ներկայացրել է համայնքի ղեկավարին:

Հավելվածները կցվում են արձանագրությանը:

Համայնքի ավագանին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության <<ԱՆԻ>> խմբակցության ղեկավարի հայտարարությունը ընդունեց ի գիտություն:

Համայնքի ղեկավարը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ն. ՍԱՐՈՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

Մ. ԵՆՈՔՅԱՆ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Արձանագրեց՝ Հ. Համբարյան _____

<<24>> մայիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ